## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/108 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **17 հուլիսի 2024թ.**

2024թ-ի հուլիսի 8-17-ը ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ կահույքի ձեռքբերման ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/108 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Մ. Գրիգորյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Վանաձորի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար; |
| Ա. Բաղդասարյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Վանաձորի մասնաճյուղի բաժնի վարիչ; |
| Ա. Մովսիսյան՝ | Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Վանաձորի մասնաճյուղի տնտեսական աշխատանքների համակարգող: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Մ: Գրիգորյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Վ. Վարդանյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, աճուրդի առաջարկված մեկնարկային գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
4. Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ որոշելու մասին:

5. Համակարգի միջոցով գեներացված հայտարարություն/ներ/ի և անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:

6. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ, ԱՃՈՒՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2024թ-ի հուլիսի 8-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում ժամը 10:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված, և հայտարարեց գնման առարկաների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին (ՀՀ դրամ) | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | Ուսանողական գրասեղան | 2291000 | 7/9/2024 10:00 | 2750000 |
| 2 | Ուսանողական աթոռ | 1650000 | 7/9/2024 10:00 | 1980000 |
| 3 | Ուսուցչի աթոռ | - | Չկայացած | 175000 |
| 4 | աթոռ մետաղյա | - | Չկայացած | 175000 |
| 5 | Կավճա մագնիսային գրատախտակ | - | Չկայացած | 20000 |
| 6 | Սպիտակ գրատախտակ | - | Չկայացած | 100000 |
| 7 | Ուսուցչի գրասեղան | - | Չկայացած | 275000 |
| 8 | Սեղան ցուցադրական քիմիայի համարսեղաններ | - | Չկայացած | 80000 |
| 9 | Սեղան ցուցադրական ֆիզիկայի և կենսաբանության կաբինետի համար | - | Չկայացած | 320000 |
| 10 | Ուսումնական նյութերը պահելու համար նախատեսված դարակաշար պահարան | 24444400 | 7/9/2024 10:00 | 1200000 |
| 11 | Ուսումնական նյութերը պահելու համար նախատեսված դարակաշար պահարան | 24444400 | 7/9/2024 10:00 | 1000000 |
| 12 | Ուսումնական նյութերը պահելու համար նախատեսված դարակաշար պահարան | 24444400 | 7/9/2024 10:00 | 300000 |
| 13 | Ուսումնական նյութերը և սարքավորումները պահպանելու համար նախատեսված շարժական պատվանդան | 24444400 | 7/9/2024 10:00 | 480000 |
| 14 | Ուսուցչի գործնական առաջադրանքների համար նախատեսված աշխատանքային պահարան | - | Չկայացած | 160000 |
| 15 | Ուսումնական նյութերը պահելու համար նախատեսված դարակաշար պահարան | - | Չկայացած | 360000 |
| 16 | Ցուցադրման շարժական սեղան | 24444400 | 7/9/2024 10:30 | 400000 |
| 17 | Ստորին սեկցիայով լվացարան վերևի սեկցիա դարակ | 24444400 | 7/9/2024 10:30 | 4200000 |

ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/108 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացած տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները՝ Ընթացակարգը 3-9, 14-15-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/108 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե; հեռ. | Էլ. Փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | ԱՁ Արման Առաքելյան | Գեղարքունիքի մարզ, գ.Վարսեր, 2-րդ փողոց, տուն 11; +374 98 800 413 | arman.araqelyan81@gmail.com | 75427886 |
| 2 | ՆԱՐՎԱԿԻ ՍՊԸ | ք.Արտաշատ Մռավյան 6; 091 362555 | marine.06@inbox.ru | 04217272 |
| 3 | ՖՈՒԴՍԻԹԻ ՍՊԸ | ք. Երևան, Նոր Նորք 0090,Գայի պ./Շ/11/20; 010 62-49-66 | FOODCITYAVAN@yandex.ru | 01028873 |

2024 թվականի հուլիսի 9-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ՝ համակարգի միջոցով գնահատման մեջ ներառված.

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/108 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.

2. Ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.

Ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ. **ԷԱՃԱՊՁԲ-24/108** ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել են հետևյալ անճշտությունները.

**«Ֆուդսիթի» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված դիմում հայտարարության փաստաթղթում նշված ծածկագիրը չի համապատասխանում սույն Ընթացակարգի ծածկագրին, մասնավորապես՝ **«ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/108»-ի փոխարեն նշված է՝ «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/55», ինչպես նաև՝ պատվիրատուի անվանումը՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամ»-ի փոխարեն նշված է՝ «Վարչապետի աշխատակազմ», փաստաթղթում նշված է որ մասնակիցը մասնակցում է 1 չափաբաժիններին, սակայն մասնակցել է 1-2, 10-13, 16-17-րդ չափաբաժիններին, ինչպես նաև փաստաթուղթը հաստատված չէ էլեկտրոնային-թվային ստորագրությամբ**: Բացակայում է նաև Ընթացակարգի հրավերով սահմանվող և պահանջված իրական շահառուների վերաբերյալ փաստաթուղթը համաձայն հավելված 1.3-ի: Առաջարկվող ապրանքի նկարագրի փաստաթղթում՝ **10-13, 16-17-րդ** չափաբաժնի մասով լրացված չեն առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիր դաշտերը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

### 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉԶԱՆԱԶՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2024 թվականի հուլիսի 9-ին, Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների՝ ընտրված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

| Չ/հ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | Ընտրված մասնակից «X» |
| 1 | Ա/Ձ Արման Առաքելյան | 2750000 | 2750000 | 20 % | 3300000 | 2268090 | 20 % | 2721708 | X |
| 1 | ՆԱՐՎԱԿԻ ՍՊԸ | 2750000 | 2291000 | 20 % | 2749200 | 2291000 | 20 % | 2749200 | |
| 1 | ՖՈՒԴՍԻԹԻ ՍՊԸ | 2750000 | 24444400 | 20 % | 29333280 | 24444400 | 20 % | 29333280 | Գնման գնի գերազանցում |
| 2 | Ա/Ձ Արման Առաքելյան | 1980000 | 1980000 | 20 % | 2376000 | 1617000 | 20 % | 1940400 | X |
| 2 | ՆԱՐՎԱԿԻ ՍՊԸ | 1980000 | 1650000 | 20 % | 1980000 | 1633500 | 20 % | 1960200 | |
| 2 | ՖՈՒԴՍԻԹԻ ՍՊԸ | 1980000 | 24444400 | 20 % | 29333280 | 24444400 | 20 % | 29333280 | Գնման գնի գերազանցում |
| 10 | ՖՈՒԴՍԻԹԻ ՍՊԸ | 1200000 | 24444400 | 20 % | 29333280 | 1000000 | 20 % | 1200000 | X |
| 11 | ՖՈՒԴՍԻԹԻ ՍՊԸ | 1000000 | 24444400 | 20 % | 29333280 | 833333 | 20 % | 999999.6 | X |
| 12 | ՖՈՒԴՍԻԹԻ ՍՊԸ | 300000 | 24444400 | 20 % | 29333280 | 250000 | 20 % | 300000 | X |
| 13 | ՖՈՒԴՍԻԹԻ ՍՊԸ | 480000 | 24444400 | 20 % | 29333280 | 480000 | 20 % | 576000 | Գնման գնի գերազանցում |
| 16 | ՖՈՒԴՍԻԹԻ ՍՊԸ | 400000 | 24444400 | 20 % | 29333280 | 333330 | 20 % | 399996 | X |
| 17 | ՖՈՒԴՍԻԹԻ ՍՊԸ | 4200000 | 24444400 | 20 % | 29333280 | 3500000 | 20 % | 4200000 | X |

09.07.2024թ-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և համակարգի միջոցով ծանուցելով առաջարկել շտկման ենթակա անհամապատասխանություններ արձանագրված մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

11.07.2024թ-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. «Ֆուդսիթի» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետներում համակարգի միջոցով չի ներկայացվել արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

15.07.2024թ-ին Հանձնաժողովը որոշեց.

1. **«Ֆուդսիթի» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտերը գնահատել անբավարար և մերժել, Ընթացակարգի հրավերի առաջին մասի 8.11 կետով սահմանված պահանջների համաձայն:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն նախաձեռնել գործընթաց՝ **«Ֆուդսիթի» ՍՊԸ-ին** գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

3. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները՝ Ընթացակարգը 10-13, 16-17-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

4. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:

5. Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված հայտերի գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

6. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| **Չ/Հ** | **Գնահատման մեջ ներառված մասնակցի անվանումը*** | **Գնահատման արդյունքը** |
|---|---|---|
| 1-2-րդ | Ա/Ձ «Արման Առաքելյան» | բավարար |
| 10-13, 16-17-րդ | «Ֆուդսիթի» ՍՊԸ | անբավարար |

*Գնահատվում են միայն մասնակիցների կողմից ներկայացված այն հայտերը, որոնք համակարգի կողմից ներառվել են գնահատման ենթակա հայտերի մեջ:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 4. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 3-րդ կետով ներկայացված Աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ՆԵՐ/Ի և ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Վ. Վարդանյանը ներկայացրեց գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում՝ համակարգի կողմից տրամադրված հայտարարությունների տեքստերը:

17.07.2024թ. Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել Ընթացակարգի շրջանակում հրապարակվող հայտարարություն/ներ/ը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարության տեքստերը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 6. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Մ. Գրիգորյան ________________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ա. Բաղդասարյան ________________

Ա. Մովսիսյան ________________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Վարդանյան ________________